

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԼԱՎԻՆՏԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ («Հայերի ցեղասպանությունը» և հրեական Հոլոքոստը անժխտելի իրողություն են. ընդհանրություններ և ժխտման փորձեր»):
_ Հեղինակի մասին տես՝ հանդեսի նախադր (թիվ 5) համաբառում:

ԱԿԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ («Հայոց Մեծ եղևոնը և հայ գաղթականությունը Կովկասում 1914-1916թթ.»):

Պատմական գիտությունների թեկնածու, Երևանի մանկավարժական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի ղեկավար:

Գիտական հետազոտությունների շրջանակն ընդգրկում է 1908-1918թթ. արևմտահայ քաղաքական պատմությունը և Հայոց պատմության հին շրջանի հիմնահարցերը:

Եւրոպայում 40 գիտական հոդվածների, ցեղասպանությանն առնչվող գրականության մատենագիտության հեղինակ է: Ձեկուցումներով հանդես է եկել մի շարք հանրապետական և միջազգային գլխաժողովներում:

ՏԻԳՐԱՆ ՄԱՀԱԿՅԱՆ («Մամուլի գրաքննությունը և լրատվականության կիրառվող արգելքները Օսմանյան Թուրքիայում 1914-1916թթ.»):

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության քանդաքան-ինստիտուտի ասպիրանտ, «Լրագրեր հասարակական գիտությունների» հանդեսի խմբագիր:

Գիտական հետազոտությունների շրջանակը՝ հայ ժողովրդի նորագույն պատմության հիմնահարցերը, մասնավորապես, Հայոց Մեծ եղևոնի լուսարանումը 1915-1916թթ. հայ պարբերական մամուլում: Թեկնածուական ատենախոսության թեման է՝ «Մեծ եղևոնը հայ պարբերական մամուլում 1915-1916թթ.»։ Հեղինակ է Հայոց ցեղասպանության հիմնահարցերին առնչվող մի շարք հոդվածների: Ձեկուցումներով հանդես է եկել աարքեր հանրապետական և միջազգային գլխաժողովներին:

ՄՀԵՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ («Ճ. Նանսենի «Հայաստանը և Մոլդավիոյ Արևելքը» աշխատության պատմա-սոցիոլոգիական արժեքը»):

Հեղինակի մասին տես՝ հանդեսի նախադր (թիվ 5) համաբառում:

ՎԱԼԵՐԻ ԹՈՒՆՅԱՆ («Армянский голод и русская пресса: 1915-1917гг.»):

Պատմական գիտությունների դոկտոր, քաղաքագիտության պրոֆեսոր, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Ս.Ք և ԸՏ դեպարտամենտի վարիչ:

Գիտական հետազոտությունների շրջանակն ընդգրկում է հիմնականում 19-20-րդ դդ. սկզբին Հայաստանում և Անդրկովկասում Ռուսաստանի քաղաքականության (տնտեսություն, եկեղեցի, վարչական կառավարում, Հայկական հարց) խնդիրները:

Հեղինակն է «Հայաստանը և Ռուսաստանը 1878-1897թթ.» (Եր., 1997), «Ռուսաստանը և հայկական հարցը» (Եր., 1998), «Ղարաբաղի բախումը» (Եր., 1999), «Հայկական հարցը ռուսական մամուլում 1900-1917թթ.» (Եր., 2000), «Հայոց եկեղեցու «Պոլոժենիան»» (Եր., 2001) աշխատությունների, բազմաթիվ գիտական հրատարակումների:

ԹԵՄՍԱ ՀՈՅՄԱՆ («Պատմագրությունը, ցեղասպանությունը և նրա միջազգային ճանաչումը»):

Բեռլինի Ազատ համալսարանի Արևելյան Եվրոպայի հետախուտու գիտաշխատող, Հայոց ցեղասպանությանը նվիրված մի շարք հրատարակումների հեղինակ, միջազգային գլխաժողովների մասնակից:

1979-ից «Սպառնալիքի տակ գտնվող ժողովուրդների պաշտպանության ընկերություն» միջազգային իրավապաշտպան կազմակերպության նախագահության անդամ է: 1985-ին Բեռլինում հիմնել է Հայաստանի լրատվության և փաստագրության կենտրոնը:

Հեղինակ է նաև հայ ժողովրդի նոր և նորագույն պատմության տարրեր հարցերին նվիրված քաղմաթիվ այլ առումնասիրություններին:

ԿԱՐԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ («Նդեռնապարծ մասանք. վավերագիր վկայություն»).

Հնագետ-պատմաբան, Հայաստանի պատմության պետական քանդաքարնի հնագիտության բաժնի առաջատար գիտաշխատող:

Քննարկվող նյութի վերաբերյալ ունի մի շարք հրապարակումներ, 2000թ. հանդես է եկել Հայոց ցեղասպանության խնդիրներին նվիրված միջազգային գիտաժողովում:

ԱՆԱԿԻՏ ԲԱՐԴԱՍԱՐՅԱՆ («Հայոց ցեղասպանության մասին ժողովրդական երգերը՝ երաժշտա-քանաստեղծական հատկանիշների տեսանկյունով»).

Արվեստագիտության թեկնածու, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ժողովրդական արվեստի քաժնի ավագ գիտաշխատող, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտական ֆուլկլորագիտության ամբիոնի դոցենտ:

Առեմնախտության թեման է «Նմանակումային կառույցները Կոմիտասի երկերում» (Մոսկվա, 1990): Հետազոտությունների ոլորում է՝ 19-րդ դարում հայկական նոտագրությամբ ձայնագրված ավանդական եկեղեցական երաժշտությունը

(Չայնագրյալ Պատարագ, Շարակնոց), ժողովրդական երաժշտության ֆակտուրայի, վանկաչափական կառույցները, կատարողական կերպերը և երաժշտա-քարքառային հատկանիշները:

Հեղինակ է երաժշտագիտական քաղմաթիվ աշխատասիրություններին: Ձեկնուցումներով հանդես է եկել հանրապետական և միջազգային մի շարք գիտաժողովներում:

ՄԱՄՎԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ («Փարիզի վեհաժողովի հայկական հուշագիրը և նրա հետագա ճակատագիրը»).

Հայկական պետական մանկավարժական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ: Թեկնածուական առեմնախտության թեման է «Պողոս Նուրար. հասարակական-քաղաքական գործունեությունը»:

Ուսումնասիրության շրջանակներն ընդգրկում են եգիպտահայ քարերար և Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուրար փաշայի գործունեությունը, ռը սերառքեն կապված է Հայկական հարցի կարևորագույն փուլերից մեկին՝ 1912-1921թթ. ընկած ժամանակաշրջանին:

Ունի թեմային առնչվող գիտական հրապարակումներ: